

**«Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ վերաֆինանսավորմանը ներկայացվող վարկերին ներկայացվող լրացուցիչ պայմաններ**

<p>Վարկառու (և նոր տրամադրվող, և վերակառուցվող (վերաֆինանսավորվող) վարկի)</p>	<p>Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի (ներառյալ բոլոր զորամասերը և Արցախի հանրապետության պաշտպանության բանակը) շարքային, ենթասպայական և սպայական կազմը (բացառությամբ պարտադիր ժամկետային զինծառայողների)</p>
<p>Վարկի նպատակը</p>	<p>Գործող սպառողական («Սպառողական կրեդիտավորման մասին» օրենքի կարգավորմանը ենթակա վարկ, պարտավորության տարաժամկետ վճարման իրավունք, այդ թվում՝ ժամկետանց, չաշխատող վարկային պարտավորություն) վարկերի վերակառուցում</p>
<p>Վարկի գումարի մեծությունը</p>	<ul style="list-style-type: none"> <li>· Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կրտսեր և ավագ սպայական կազմի (լեյտենանտի զինվորական կոչումից մինչև գնդապետի զինվորական կոչում ունեցողները ներառյալ) համար՝ յուրաքանչյուր վարկառուի հաշվով առավելագույնը՝ 1.000.000 դրամ:</li> <li>· Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության շարքային և ենթասպայական կազմի (բացառությամբ պարտադիր ժամկետային զինծառայողների) համար՝ յուրաքանչյուր վարկառուի հաշվով առավելագույնը՝ 500.000 դրամ<sup>1</sup></li> </ul>
<p>Ներկայացվող փաստաթղթեր</p>	<p>Անձը հաստատող փաստաթուղթ, Վարկային առաջարկ-դիմում, Տեղեկանք ծառայության վայրից, որտեղ պարտադիր պետք է նշվեն զինվորական կոչումը և աշխատավարձի չափը, անչափահաս երեխայի(ների) ծննդյան վկայական(ներ) (առկայության դեպքում Վերակառուցված վարկի/երի վարկային պայմանագրի լուսապատճենահանված տարբերակ*</p>
<p>Այլ պահանջներ</p>	<ul style="list-style-type: none"> <li>· «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ վերաֆինանսավորման կարող են ներկայացվել մինչև 2018 թվականի դեկտեմբերի 1-ը տրամադրված վարկերի վերակառուցմանը/վերաֆինանսավորմանն ուղղված վարկերը,</li> <li>· Յուրաքանչյուր վարկառուի վարկերը կարող են «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ վերաֆինանսավորման ներկայացվել իրեն հասանելիք առավելագույն սահմանաչափի շրջանակներում միայն մեկ անգամ (նաև առավելագույն սահմանաչափի շրջանակներում երկու և ավելի վարկերի տեսքով):</li> </ul>

\* Նշված փաստաթուղթ/երը հաճախորդի կողմից կարող են չներկայացվել Բանկում առկայության դեպքում:

<sup>1</sup> Եթե վարկառուն ունի ՀՀ Կառավարության 23.05.2013թ.-ի թիվ 590-Ն Որոշմամբ հաստատված Ծրագրի շրջանակներում ստացված վարկ, ապա այդ վարկային պարտավորությունը ներառվում է սույն հավելվածի 3-րդ կետով սահմանված վարկի գումարի մեծության առավելագույն չափի մեջ, ընդ որում՝ հաշվարկում ներառվում է վարկի պայմանագրային գումարը: